Մրցույթի հայտարարություն

<<ՀՀ Արարատի մարզի Լուսառատի միջնակարգ դպրոց >>ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ ՀՀ <<Արարատի մարզի Լուսառատի,Եղեգնավանի,Նոյակերտի դպրոց>> ՊՈԱԿ-ների կառավարման միացյալ խորհուրդը հայտարարում է մրցույթ՝<<ՀՀ Արարատի Լուսառատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր տեղ զբաղեցնելու համար:

1.Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1)Հայաստանի հանրապետության քաղաքացիությունը.

2)Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը(հավաստագիրը):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
1)Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2)Հայաստանի Հանրապետության անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3)Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4)Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5)Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Լուսառատի միջնակարգ դպրոցում՝նոյեմբերի 22-ից մինչև դեկտեմբերի 12-ը ներառյալ,ամեն օր՝ժամը 10:00-ից 15:00-ը , բացի հանգստյան(շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատավքային՝տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 26-ին՝ ժամը 14-00-ին , ՀՀ Արարատի մարզի Լուսառատի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել (077)50-04-77 հեռախոսահամարով:

ՀՀ Արարատի մարզի << Լուսառատի, Նոյակերտի , Եղեգնավանի դպրոց>> ՊՈԱԿ-ների կառավարման միացյալ խորհրդի նախագահ՝ Արտակ Եմիշյան